ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ թիվ 1
04.03.2025թ. կնքված N ՏԿԵՆ-ՄԱԾՁԲ-2025/5Հ հեղինակային հսկողության ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագրի

ք. Երևան « 21 » « 01 » **2026թ.**

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար Ա. Երիցյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ճաննախագիծ ինստիտուտ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Դ. Քարտաշյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, միասին այսուհետև՝ Կողմեր, հիմք ընդունելով Կողմերի միջև 04.03.2025թ. կնքված N ՏԿԵՆ-ՄԱԾՁԲ-2025/5Հ պետական գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.5 կետը, ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 33-րդ կետի 9-րդ ենթակետը և ՀՀ կառավարության 2025թ-ի դեկտեմբերի 11-ի N 1827-Ն որոշումը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

Համաձայն ՀՀ կառավարության 2025թ-ի դեկտեմբերի 11-ի N 1827-Ն որոշման՝ Պայմանագրի Չափաբաժին 2-ով սահմանված **S-1-33,Կոշ (S-1-8)-Վերին Սասունիկ-Լեռնարոտ տեղական նշանակության ավտոճանապարհի կմ0+000-կմ9+500 հատվածի հիմնանորոգման աշխատանքների նկատմամբ հեղինակային հսկողության ծառայությունների** մատուցման համար 2025թ-ին նախատեսված գումարը նվազեցվել է՝ **3 604 900** (երեք միլիոն վեց հարյուր չորս հազար ինը հարյուր) ՀՀ դրամի չափով և տեղափոխվել 2026 թվական, ինչի արդյունքում 2025թ-ի մատուցման ենթակա ծառայությունների արժեքը Չափաբաժին 2-ի մասով՝ **13 145 100** (տասներեք միլիոն հարյուր քառասունհինգ հազար հարյուր) ՀՀ դրամի փոխարեն կկազմի **9 540 200** (ինը միլիոն հինգ հարյուր քառասուն հազար երկու հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ՝ ԱԱՀ-ն :

Պայմանագրի գինը մնում է անփոփոխ:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ կողմերը որոշեցին.

1.1 Հաստատել Պայմանագրի N2 Հավելվածով սահմանված 2025 թվականին մատուցված ծառայությունների նոր Վճարման ժամանակացույցը՝ համաձայն սույն Համաձայնագրի Հավելված 1-ի:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն Համաձայնագիրը կնքվում է հայերեն լեզվով երկու օրինակից, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

3.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	«Ճաննախագիծ ինստիտուտ» ՍՊԸ
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,	ՀՀ, ք. Երևան, Աճառյան 54բ
ՀՀ կենտրոնական գանձապետարան	«Ինեկոբանկ» ՓԲԸ
ՀՀ 900011002632	ՀՀ 2050022451291001
ՀՎՀՀ 02815457	ՀՎՀՀ 00813453
գլխավոր քարտուղար	Տնօրեն
Ա. Երիցյան	Դ. Քարտաշյան
/ստորագրություն/ Կ.Տ	/ստորագրություն/ Կ.Տ

Հաստատված է
N ՏԿԵՆ-ՄԱԾՁԲ-2025/5Հ գնման պայմանագրի
«21» «01» 2026թ. կնքված
Թիվ 1 Համաձայնագրով
Հավելված 1

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

(ՀՀդրամ)

Հրավերով նախատեսված չափաբաժն իհամարը	Գնումների պլանով նախատեսվա ծմիջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգմ ան (CPV)	Գնման ենթակա ծառայությունների անվանումը	Ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնե 2025թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը տարվ
1	98111140/9	S-1-25,/Մ-3/ (Աշտարակ) – Փարպի - Ղազարավան տեղական նշանակության ավտոճանապարհի կմ 0+000-կմ 4+000 և կմ 6+000- կմ 13+500 հատվածների հիմնանորոգման աշխատանքների նկատմամբ հեղինակային հսկողության ծառայություններ	—	—	—	1 401 956	1 401 956	1 401 956	8 411 738	8 411 738	8 411 738	14 019 564	14 019 564	14 019 564	***14 019 56***
2	98111140/10	S-1-33,Կոշ (S-1-8) - Վերին Սասունիկ - Լեռնարոտ տեղական նշանակության ավտոճանապարհի կմ 0+000-կմ 9+500 հատվածի հիմնանորոգման աշխատանքների նկատմամբ հեղինակային հսկողության ծառայություններ	—	—	—	1 314 510	1 314 510	1 314 510	7 887 060	7 887 060	7 887 060	9 540 200	9 540 200	9 540 200	***9 540 20***

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900011002632
ՀՎՀՀ 02815457
գլխավոր քարտուղար
Ա. Եղիցյան

/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Ճաննախագիծ ինստիտուտ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Աճառյան 54բ
«Ինեկոբանկ» ՓԲԸ
ՀՀ 2050022451291001
ՀՎՀՀ 00813453
Տնօրեն
Դ. Քարտաշյան

/ստորագրություն/
Կ.Տ.